Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻՆ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսավորությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն, հընթացս որի Նորին Սրբությունը մոսկվաբնակ բարերար Վիտալի Գրիգորյանցին պարգևատրեց Հայ Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Բացման խոսքով հանդես եկավ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը: Սրբազան Հայրն անդրադարձավ բարերար հայորդու կենսագրությանն ու անցած ուղուն և այն սիրուն ու նվիրմանը, որ ունի Վիտալի Գրիգորյանցը հանդեպ մեր Հայրենիքն ու Ս. Էջմիածինը: Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում եկեղեցանվեր բարերարին:

«Անձնապես ճանաչում ենք Ձեզ և այսօր առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Ձեր բարի գործերին, որոնք միտված են Ռուսաստանում բնակվող մեր ժողովրդի զավակների ազգային-եկեղեցական կյանքը զորացնելու ազնիվ նպատակին: Մենք տեղյակ ենք, թե որքան մեծ աջակցություն եք բերում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմին և հատկապես Մոսկվայի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման աստվածահաճո գործին, որ լինելու է առաջնորդանիստ եկեղեցին Տիրախնամ թեմի: Ռուսաստանում և մասնավորաբար նրա մայրաքաղաք Մոսկվայում բնակվող մեր ժողովրդի բազմահազար զավակներ, որ աղոթքի պիտի կանգնեն նորակառույց եկեղեցում, մշտապես երախտագիտությամբ պիտի հիշեն Ձեզ և պատվարժան բոլոր հայորդիներին, ովքեր ջանք ու ներդրում ունեն եկեղեցու կառուցման ազգօգուտ գործում:

...Ամենակարող Աստծո օրհնությամբ Դուք Ձեր կարողությունները ծառայեցրել եք նաև Լուսավորչապսակ մեր Սուրբ Աթոռի՝ համայն մեր ժողովրդի հոգևոր նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը: Դուք, արդարև, բարեգործ և հավատավոր զավակն եք բարեպաշտ մեր ժողովրդի և արժանի Հայրապետական բարձր գնահատանքի»,- ասվում է Հայրապետական կոնդակում (տե՛ս «Էջմիածին», 2004, Դ. էջ 17):

Պարգևատրումից հետո Վիտալի Գրիգորյանցն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հավաստիացնելով, որ իր կարելին պիտի անի Հայրենիքի, Հայաստանյայց Եկեղեցու և Ս. Էջմիածնի պայծառության ու բարգավաճման համար:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայտնելով իր գոհունակությունը, որ Վիտալի Գրիգորյանցը մշտապես և անսակարկորեն զորակցում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծրագրերին, ինչպես նաև աջակցում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, ինչպես նաև Ուկրաինայի հայոց թեմերի առաքելության նվիրական գործին:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Ս. Գեղարդ վանքի երգչախումբը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՑԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ